

տպեց, բայց ետքը չկրնալով ամբողջ ստակը վճարել՝ բանտ դրուեցաւ, ու հազիւ թէ ուրիշի մը ողորմութեամբ բը ազատեցաւ :

Կալէսի իշխանը որովհետեւ ամէն ջանք կ'ընէր Միգղիացւոց սիրելի ըլլալու, գիտութեանց ալ սէր ունենալով ինքզինքը իմաստնոց պաշտպան կը ցուցնէր, (Թումանն ալ իր քովը առաւ, ու իրեն բանաստեղծական հանձարը տեսնելով՝ տարին հարիւր լիրէ սթերլին եկամուտ կապեց անոր : Մնատենները Միգղիացի ըսուած ողբերգութիւնը շինեց, որ հաճոյ չանցաւ. ետքը (Թանգրեթի և Սիլիմանդա ըսուած ողբերգութիւնը շարադրեց, որուն շատերը հաւնեցան, և ինչուան հիմա ալ Միգղիացւոց թատերացը մէջ կը ձևացնեն : Կրիողանա ըսուած ողբերգութիւն մըն ալ սկսաւ գրել, բայց մահը վրայ հասնելով՝ անկատար մնաց : Իրեն շինած ողբերգութիւններէն կ'երևնայ որ աս տեսակ բանաստեղծութեան այնչափ յարմարութիւն չունէր :

(Թումանին վերջի գործքը եղաւ Ինքր անդադարութեան ըսուած բանաստեղծութիւնը, որուն վրայ տարիներով աշխատեցաւ, ու շատ լաւ գործք է : Ետքը առողջութե համար Լոնտրայէն Վիու քաղաքը անցնելով, վրան ջերմ մը եկաւ, ու 1748^{ին} օգոստոսի 17^{ին} մեռաւ : Բաշ Սիլիմանտի եկեղեցին թողեցին զինքը առանց տապանադիր մըն ալ դնելու գերեզմանին վրայ. բայց ետքը Սիլիմանտի եկեղեցին փոխադրեցին ու վրան փառաւոր շէնք մը շինեցին :

Ինչահասակ էր (Թումանն ու գէր, ու ինչպէս որ հոս դրուած պատկերէն ալ կ'երևնայ՝ հաստ ու ապուշ մարդու դէմք ունէր, բայց բնութեամբ ընդ հանրապէս ուրախ էր :

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի այլ և այլ երկրներէն լաճառահանութեանը ծաղկելը :

Մտարի Փարիզ հրատարակուէր են աշխարհքիս այլ և այլ տերութեց վաճառականութեանը վրայ հարկաւոր տեղեկութիւններ, որ շատ հետաքրքրական բաներ են : Երեսն մէջ ամենէն զարմանալին Միգղիացւոց վաճառականութեան ծաղկիւն է. օրինակի համար, 1840^{ին} 1,655,8240, 100 Ֆրանքի վաճառք մտեր է Միգղիա, ու 2,911,991,950 Ֆրանքի վաճառք դուրս ելեր է. իսկ 1842^{ին} մըտածն է 1,630,118,225 Ֆրանք, և եւրոպ 2,816,106,475. Միգղիացւոցմէ ետքը Վաղղիացւոց վաճառականութիւնն է ամենէն աւելի ծաղկածը, ինչպէս որ հաշիւներէն յայտնի կ'իմացուի :

Սենք հոս դնենք զլիաւոր տերութեանց վաճառականութեան ընդհանուր ցուցակը, այսինքն աս տարիներու նայելով եւրոպ մտած վաճառքներուն գինը՝ միջին համեմատութեամբ .

Միգղիա	4,500,000,000
Գաղղիա	2,200,000,000
Միացեալ Նահանգք	1,300,000,000
Դերմանական դաշնակցութիւն	1,000,000,000
Աւստրիա	850,000,000
Ստորին Նահանգք	680,000,000
Ռուսաստան	650,000,000
Պելճիա	600,000,000
Սարաւենիա	600,000,000

Եւ բոլորը մէկէն 12 ու $\frac{1}{2}$ երկմիլիոն. թող Եւրոպայի մէկալ տերութեանց վաճառականութիւնները, զոր օրինակ Մորվեկիայի, Տանիմարքայի, Սպանիոյ, Փորթուգալի, (Սմանեան տերութեան, և Իտալիոյ և Յունաստանի գաւառներունը :